

խանաց, սեպուհեաց եւ հպատակաց խորհրդով ու տը-
րամադրութեամբ՝ յանձնեց ներհուն եւ խոհեմ ան-
ժանց ժողովել ի բերանոյ արանց, այլ եւ այլ ազգաց
բազմազան օրէնքն եւ սահմանադրութիւնքն եւ ի գիր
արկանել զնոսա. ապա գումարելով պատրիարքին եւ
սեպուհեաց՝ որոշեց ամենաօգտաւէտքն ու կազմեց մի
ժողովածոյ օրինաց, որ անուանեցաւ Ասեան եւ օ-
րէնք Երուսաղէմայ: Թագաւորութիւնն հրատարակուեց
անբաժանելի եւ ժառանգական իզական ճիւղով ան-
զամ առ ի չզոյէ արական ճիւղի. ժառանգ չեղած
միջոցին Սեպուհը, այսինքն բարձր կղերն եւ Թապա-
ւորութեան անմիջական հպատակքն պիտի զատէին
ընտրութիւնն. պատրիարքին անկ էր Թագադրել: Բո-
լոր Թագաւորութիւնն բաժանուած էր Սեպուհու-
թեան վերայ. Սեպուհութիւնքն, որոյ առաջինքն ե-
ղեն Եղեսիոյ Կոմսութիւնն, Անտիոքայ իշխանութիւնն
եւ հուսկ յետոյ Տրապիսոյ իշխանութիւնն, ժառան-
գականք էին. Թագաւորը կարօղ էր տալ իւր իշխա-
նութեան կամ արքայական Սեպուհութեան մի մասն,
որպէս վիճակ, բայց սովաւ ստացիչք չէին լինում
անմիջական հպատակք Թագաւորութեան:

Գօտըֆրուա հաստատեց երկու դատարան. մինն
կոչեցեալ քարճ առեան ուր ինքն կը նախագահէր եւ
կը դատէր ընդ Սեպուհեաց աղնուական եւ աւատական
վէճերն. երկրորդն կոչեցեալ Ստրիմ առեան, «առեան
ձեռակռի», ուր կը նախագահէր մի զերակոմս ընդ
իրաւագիտաց քաղաքի. կը դատէր զիւղաքաղաքաց-
ւոյ զործքն թէ անձնական, թէ իրական եւ թէ քրէա-
կան:

Սէնէշալն, զրան առաջին պաշտօնեայն կը դատէր
հոգեւորականները, դատաւորը եւ սեպուհը. սոքա
հաստատեալ էին դատել այն անձինքը, որք իրաւունք
ունէին յանդիման լինել յատենի Գերակոմսաց, զոր
օրինակ հնաշխարհիկ քրիստոնեայքն: Գրան երկրորդ
պաշտօնն ըստանձնեալ էր սպարապետն, որոյ ետե-
ղակալը Մարաշախտ տիտղոսն կը կրէր: Եկեղեցին
կարգադրուեց հանգոյն արեւմտեան Եկեղեցեաց, բայց
իւր անկախութիւնն ի Թագաւորութենէն աւելի մէկին
եւ բացարձակ կերպիւ յայանուեց. միայն արտաքոյ
կարգի պարագայից մէջ նա օգնէր կը մատու-
ցանէր արքային:

Օրինաց մատենանը պահուեցաւ Սուրբ Գերեզմա-
նատան Եկեղեցւոյ մի արկղկի մէջ, սակայն նորա

բնադիրն չընդօրինակեցին, պատճառ՝ որ մէն մի աս-
պետի եւ դատաւորի պարտաւորութիւնն էր գիտե-
նալ զայն բերանացի ու միայն ի տարակուսական
պարագայս կը նայէին բնագրին: Սոյն միակ օրինակս
կորաւ 1187 ին, երբ Սալահաին յաիշտակեց զԵրու-
սաղէմ. ապաքէն հարկ էր վերակազմել զայն ի բե-
րան առեալ ասպետաց յիշողութեանց միջոցաւ: Ի
վերջոյ ժան Իբէլացի, Կոմս Յոպպէի վերագրեց օ-
րէնքըն, որքան որ ինքն եւ այլ կը յիշէին. այս աշխա-
տութիւնս եղեւ ի վերջնում ժամանակի 1252 ին՝
քանզի անդ կը յիշեն Սիրեն քաղաքի պաշարումն, որ
անձնատուր եղեւ այդ իսկ թուականում: Ժան Իբէլացի
եմոյժ իւր Խմբագրութեան մէջ այն դատաստանական
ձեւը՝ որ Ֆիլիք Նաւարացի ոմն յօրինեալ էր մի եւ
նոյն թուականում. Ֆիլիքս այս բնակէր ի Կիպրոս,
ուր Երուսաղէմայ օրէնքն մուտ գտաւ 1192 ին:
Նոյնպէս ի կիր արկին Բիւզանդեան Լատին Կայս-
րութեան մէջ. ի 1421 ամի Վէնէտիկցիք ենթարկե-
ցին զայն ի վերաքննութիւն:

Հազիւ Գօտըֆրուա քայքայեալ էր յիւր իշխանու-
թեան, երբ ներկայացաւ մի ախոյեան, որին պարտ էր
լինել իւր հպատակ: Պատրիարքական պաշտօնն նախ
յանձնուած էր ad interim առ ժամանակաւոր Արնուլֆին,
Նորմանտիոյ զիւանաղայրին. բայց ձագորբեր, արքե-
պիսկոպոս Պիզայի հոսանելով պապի մի յանձնարարու-
թեամբ՝ բարձրացաւ յաթոռ պատրիարքութեան ու զրաւ
Թագ ի զլուխ Գօտըֆրուայի, որպէս կալուած եկեղեցւոյ:
Սոյն հոգեւորականս յայնմ հետէ եցոյց մի մեծ իշ-
խանութիւն բոլոր քաղաքական զործոց եւ Թագաւորի
վերայ, այդու յայտ ածելով որպէս թէ մտադիր է ի-
րագործել յարեւելս այն յատակադիւր, զոր Գրիգոր
Է կը տածէր յաղագս Եւրոպիոյ կամ լաւ եւս ու-
նիւմ ասել՝ յաղագս աշխարհի: Գլխով Տիւրացի,
պատմագիր առաջնախաչակրութեան կը պատմէ, որ
ի 1063 Մօսթանսեր - Բիլլահ Եգիպտոսի Խէլիֆայն
պարգեւեալ էր Երուսաղէմայ Եկեղեցուն, քաղաքի մի
քառորդ մասէն՝ կործանեալ պարիսպն վերանորոգելու
թէութեամբ. ձագորբէր չը բաւականանալով մի քա-
ռորդ մասէն պահանջեց բոլոր Երուսաղէմը, որպէս
սեպականութիւն Տեառն՝ Յոպպէ քաղաքաւն հան-
դերձ, զոր Խաչակիրք վերստին նորոգեալ էին. բա-
րի, խոնարհ, բարեպաշտ Գօտըֆրուան առ ի սիրոյ
խաղաղութեան խոստացաւ զիջանիլ այդմ, խնդրեաց մի

քանի այդ քաղաքներ տիրապետելուն պես. եթէ այդ չը լինէր ի կենդանութեան իւր, պատրիարքը պիտի ժառանգէր անմիջապէս զԵրուսաղէմ եւ զՅոսպպէ:

Ի հաշիւ առնելով զԽաչակիրս՝ ի ճահէ մեզ հետեւել ընդհանուր սովորութեան, որին նայելով եօթն ահաղին արշաւանք յընթացս երկուց դարուց յորջորջուած են Խաչակիր անուամբ, բայց ըստ իրականութեան այնքան բազմաթիւ արշաւանք եղեն յայդ երկուս դարս, որոց թիւը որոշել անհնարին է: Նախ քան զԳօտըֆրուա Բույժն Վէնէտիկցւոց Խաչակրաց մի տորմիդ ժամանել էր յեզերս Սիրիայի. դուն մի ժամանակէն զկնի 1409 ին, հանրապետութիւն յընդեց 200 նաւերէ բաղկացեալ մի նաւատորմիդ: 1404 ին ձննուացւոց եօթանասուն պատերազմիկ նաւք հասան եւ ապա 1408 ին եւս բազմազոյն. անկարելի եւ յուսկէտս իցէ ծանօթացնել Խտալիոյ հանրապետութեանց բոլոր արշաւանաց, զի ժամանակակից պատմագիրքք անորոշաբար կը խօսին: Միայն հուն մի ժամանակ Ս.սկալոնի պատերազմէն զկնի յոյով իշխանք, Փլանտրիոյ Կոմսն, Նորմանտիոյ դուքսըն, Էւստաքէոս Բուլճոնի կոմսն վերադարձան յԷրուսաղ ընդ 20,000 Խաչակիրս. զրեթէ այդ թուիդ հաւասար մի թիւ մնաց ընդ Ռայմօն Ժիլլ, որ զեռ մի քանի ժամանակ բնակեցաւ ի Պաղեստին ընդ Կոմսին եղեսիոյ, ընդ Բօէմոնի իշխանին Ս.նտիօքայ եւ Թանկրէդի իշխանին Տիքերիոյ եւ Գալիլիոյ: Գօտըֆրուայի զօրութիւնն նուազեցաւ մինչ ի 500 ասպետ եւ 2000 հետեւակ:

ՊԼՏՄԼԿԱՆ ԵՐԷՐԻՐ ԼԵՂԵՐԵՐ ԵՐԵՄԵՆԻՅ:

Ի 17 Օգոստոս 1100՝ Գօտըֆրուա կնքեց իւր մականացու կենսքն *):

Պատրիարքն եւ Թանկրէդ յայտնեցին իւրեանց ի նպատ իշխանին Ս.նտիօքայ, որ զուցէ հասանէր, եթէ բանտարկեալ չը լինէր ի ճնուս Իբն Գանշմենլի **):

(*) Ոչ իսկ ամի մեռաւ Կոստանդին Աստեւ եւ Մարքէդ Հաւոց իշխանն հինգ տարի պալազատութենէն զկնի. իւր անդրանիկ որդի Թորոս Ա. յաջորդեց իրեն. սա առաւ Յունաց եւ Սկիւթացւոց ձեռից յոյով քաղաքք եւ աւանք ու մեռաւ 1125 ին:

(**) Ըստ աւանդելոյ Հայ պատմագրաց, այդ Դանշմենտ էր Հայ, որ նեղեալ ի Յունաց զնաց առ Պարոս ու ուրանդով հաւատը ընկալաւ Պարսից արքայից Սերաստիոյ կուսակալութիւնն. եւ երբ Ս.նտիօքայ կոմսը զկնի ընկաւ, Վասիլ մի Հայ իշխան մականութեանեան Գաղ, զնեց Բօէմոնը Դանշմենից 10,000 զահեկան

որ էր հիմնիչ մի տաճիկ հարստութեան ի Աերաստիա, որ ի Հայաստան. սա ձերբակալեալ էր զԲօէմոն ի պաշարման Հալէպի, զոր վերջինս կը տննչար կըցել իւր Ս.նտիօքայ իշխանութեան հետ. ուստի ի բացակայութեան նորա՝ Գօտըֆրուայի կուսակցութիւնն առաջարկեց սորա եղբոր Պլուվէնին, որ ընդունեց թէւ իւր Եղեսիոյ Կոմսութիւնն, որ թողեց իւր եղբորորդի Պլուվէն Բուրգին աւելի ընդարձակազոյն էր քան Երուսաղէմայ Թագաւորութիւնն: Արի՛ բայց կրքոտ եւ ժլատ Թանկերտն չը կամենալով հպատակել մի անձի, որին երկար ժամանակէն ի վեր կատէր, նախամեծար համարեց տալ ի ձեռս նորա իւր Տիքերիոյ կոմսութիւնն ու զնալ յՍ.նտիօք, քան նորան յարգանք մատուցանել: Պլուվէն սահմանեց այդ վիճակը ի նպատ Հուդ դը Օմէրի: Բայց մի հաշտութիւն տեղի ունենալով 1109 ին, Թանկրէդ ստացաւ զՏիքերիա, զԿայֆա եւ զԲէթլէհէմ, որպէս վիճակը Երուսաղէմայ Թագաւորութեան:

Դադօքէր պատրիարքն առաջ մերժելով Թագադրել զՊլուվէն, սա կորզեց ի ձեռանէ նորա զԵրուսաղէմ եւ զՅոսպպէ ու միացոյց վերստին ընդ միապետութեան. պատրիարքն զիջաւ յայնժամ ու Պլուվէն օծուեց ի Բեթլէհէմ, պատճառ որ՝ քրիստոնէական խոնարհութիւնն թոյլ չէր տալիս զղեսուլ ծիրանի արքայական Փրկչի չարչարուած վայրում:

ԽԵՂԵՐԵՐԻ ԼԵՂԵՐԵՐ ԵՐԵՄԵՆԻՅ:

Անցել էին հազիւ երկու տարի Երուսաղէմայ յաղթութենից յետ, նոր երաւր Խաչակրաց բաժանեալ յերիս մասունս զիմեցին ի Պաղեստին: Առաջինն բաղկացեալ էր յիտալացւոց, ի Գաղղիացւոց եւ ի Գերմանացւոց թուով 50,000 հեծելազօրք եւ 100,000 հետեւակք, ընդ որս յարեալ էին եւ մի բազմաթիւ հոյրք կանանց, մանկաց եւ ծառայից, եթէ ստոյգ են եւ չափազանց չեն ժամանակակից պատմագրաց հաշիւք: Անդ զտանէր եւ Անսէյր Արքեպիսկոպոս Միլանայ ընդ երկուց Կոմսից Լօւբարդիոյ, Ստեփան դը Բլուտ կոմսն, որ վերադառնալով ընդ Ճապովկ առաջին Խաչակրութիւնից յԷրուսաղ, իւր կնոջ Նորմանտիոյ

տալով ու առաքեց յՍ.նտիօք իւր տեղն: Թէւ պատմութեանս հեղինակն ոչինչ չէ յիշում Բօէմոնի Վասիլ ձեռամբ ազատութեան մասին, բայց ոչինչ տեղիք չունիմք կասկածել մեր պատմագրաց ճշմարտութեան վերայ այդ մասին:

Մ. Բ.

դրսի քեռ խրախուսանք եկել էր չնչել այն արատն եւ բիծն, որ այս փախուստս զորոշմել էր իւր համբաւին. կային եւ այլ ասպետք: Գերմանացիք, որ ըստ յորդորանաց Հենրիկոս Գ. ի^{*)} ընդունել էին Խաչակրութիւնն, պատճառ որ՝ այս իշխանս առ ի ստանալ զարժակումն ի բանադրանաց՝ յայտնել էր թէ մըտադիր է ուղեւորիլ ի Սուրբ Երկիրն, միացան այդ զօրքի հետ: 1101 ին Զատիկի մօտ հասան ի Շվեդմիդիա ու խնդրեցին Ալէքսի Կայսեր՝ տալ իւրեանց դիւաւոր՝ Ռայմօն Թուլուզցի ծեր կոմս, որ կը գտանուէր ի Կ. Պօլիս. այս հինաւորաց մարտականս, որոյ մօտ էր օծեալ ղեկարդն, ընդունեց հրամանատարութիւնն, բայց ոչ անազան նկատեց, որ իւր ազդեցութիւնն իշխանութիւն պիտի չունենար մի անկիրթ զօրքի վերայ, որ կը յարակայէր ի միտս գնալ Սէլճուզեանց իշխանութեան կենդրոն Բաղդադ քաղաքն տապալել: Առաջնորդեց այդ յեղուզակ զօրաց մինչ ի Կապադովկիա, ուր յամենան օդոստոսի 1101 Իրն Գանըշմէնս իշխան Մէլիտիոյ եւ Գլիմ Ապլան Խլոնիոյ Սուլթանն ի փախուստ դարձրին: Ռայմօն զգուշելով մի զոյնսիսի հրամանատարութիւնից, որ

(*) Հենրիկոս Կայսր Գերմանիոյ, էր որդի Հենրիկոս Գ. ի. առ Գրիգոր Է. Պապի հետ ունեցած վիճից եւ կապից պատճառաւ բազում յեղափոխութիւնք առթեց ի Գերմանիա: Հենրիկոս ստրատանուած էր, որպէս յարեալ Սիմօնականութեան եւ իրօք այս Կայսրս իւր երիտասարդութեան ժամանակ բոլորովին զուրկ էր յաւաքինութենէ: Պայքարումէր պապի աշխարհական իշխանութեան վերայ, վասն որոյ զումարելով մի ժողով 1076 ին, ուր ներկայ էին Սիմօնականութեանք ամբաստանեալ հոգեւորականք, տաճարներին ձգել Պապը աթոռեց աւել յորը ընտրել, Կայսրն իւր նամակի մէջ Գրիգոր Է. ին այսպէս զրեց հասցէն առ Հիւռեպրան, որ չէ Պապ, այլ մի վատբար ճգնաւոր: Պապը առաքլոր կոխելով Հենրիկոսի ժողովի վճիռը բանադրեց ղեւ ու անկեալ հրատարակեց Գերմանիոյ եւ Իտալիոյ զամից (ըստ ուրում յայնժամ իտալիա Գերմանիոյ կը պատկանէր), այդ պատճառաւ յոյժք յետս կատեցան Հենրիկոսից, այլ դաշակից լինելով Պապի հաւանութեամբ ընտրեցին 1077 ին հակակայսր Սուլթի զուրս Բօթօլֆին: Հենրիկոս էլ առնելով Հռոմ, հայածեց Գրիգորին ու Կղէմէս Գ. անուամբ մէկն հակադաս պիտի անդ: Սակայն այս Կայսեր վերջին տարիքն շատ խղճութեամբ անցան. իւր հարազատ որդիքն Պապերի զրգմամբ, որք կուտուցանէին թէ արքայութիւնն կժառանգէր, եթէ նորա հնազանդութիւնից ետ դառնար, աստամբեցան իւր ղէմ. երկրորդ որդի Հենրիկոսը իսաբէութեամբ բռնելով իւր հայրը, բանտարկեց եւ կապտեց ղեւ իշխանութիւն: Կեղծ Հենրիկոս Գ. մեռաւ ի Լիէմ բանտի մէջ 1106 ին բանադրեալ. անիբաւ պապեբը, որ նորա զօրախառնութեանց պատճառ էին եղել եւ նորա մնացորդն անդամ չը թողնէր հանգչել, հանելով ի հողոյ աստ անդ էին շրջեցնում մինչեւ որ հինգ տարուց յետոյ ազատելով մեռեալը ի բանադրանաց քաղցին:

Մ. Թ.

չունէր յարդ, պատերազմի հետեւեալ զիշերն խոյս տուաւ. առաւօտեան զօրքը անդլուխ տեսանելով իւրեան ու ըմբռնուելով մի պանական (panique) զարմարանքից ցիր եւ ցան եղեւ, Թողլով Սէլճուզեանց կատաղութեան ի բանակի եղեալ քահանայքն եւ բազմամիւ կանայքն. այդ փախուստիդ մէջ 460,000 անծինք ի կորուստ մատնուեցան:

Երկրորդ Գաղղիական մասն 45,000 Թուրք ընդ հրամանատարութեամբ Գլիլմի, կոմսին Նըվիւրի, բռնեց Լաթարազացոց ուղլին. բայց այնպիսի կերպիւ բնաջինջ եղեւ Հալի վտակի առններ, որ միայն զըլխաւորք ու 700 անծինք հասան մերկ յԱնտիոք, ուր հիւրընկալուեցան ի Թանկրէտէ:

Գլիլմ կոմս Գլիմի ժողովեց 50,000 Գաւթօն եւ ընկերակցութեամբ Հուգ Վերմանտացոյ, որ ունեցեալ էր Ստեփան տը Բլուայի վիճակն Գուի Լուանեանի համահայր եղբօր Ռայմօնի հետ անցաւ ի Հոննոսէ ու միաւորեց Վէլֆ Գ. Բաւիէրի դրսի եւ Հենրիկոս Գ. Կայսեր դստեր Իդայի հետ: Այս երրորդ մասը անցանելով ի Հունկարիոյ եւ ի Բուլղարիոյ եւ Թարկուեց առաջնոց վիճակին. ըստ ոմանց Խոյս անկաւ ի ծեռս Տաճկաց ու եղեւ մայր Զէնկի Աժապէկին. Վերմանտիոյ կոմսն զրաւեցաւ ի կենաց ի Տարսոն իւր վիրաց պատճառաւ. Վէլֆ խոյս տալով կատորածից վերադարձաւ յԵւրոպա, բայց հետանելով ի Կիպրոս, ընկճեցաւ:

Գօտրֆրուայի յաջորդ Պըտլէն Առաջնոյն ընդունած տկար օճանքն, զոր յիշեցինք, հաւանականաբար պիտի չը փրկէին զԵրուսաղէմ մի արագ կործանմանէ, եթէ Պիղայի, Ճեննիլիոյ եւ Վենետիկի խալական հանրապետութիւնքն հզօրապէս չը նպատէին. Թաղաւորը կարգեց ընդ նոսա մի սամանագործիւն, որոյ զօրութեամբ յիշեալ հանրապետութիւնք զործակից վիճելով քաղաքաց առմանց պիտի ընդունէին նոցա բաւոր դասն, եւ կողոպտից երիր բաժինն ահա զոցս օղնութեամբ Պըտլէն առաւ զԱրսուֆ, Կեսարիա, Արքայ (1104) Տրապիսոս, Պէրու (1109), որք թէ իւրեանց զրից եւ մեծութեանց պատճառաւ կարեւոր վայրք էին. այս հանրապետականքս կը նկրտէին հանապաղ օճան լինել Պաղեստինոյ Քրիստոնէից, բանգի մեծապէս կը վարձատրուէին Խաչակրաց տեղափոխութեամբ եւ իւրեանց նաւատորմիզն անհուն վաճառք կը փոխադրէին յԱրեւելեաց յԵւրոպա ի վերադարձին:

Պրտվէնի թաղաւորութիւնն եղև մի պատերազմական թատրոն ընդ ծով եւ ընդ ցամաք եղիպտոսի Խէլիֆայից ցամաքային եւ ծովային զօրաց հետ միայն ի ձմրան դու կ'առնէին: Միւս կողմից երուսաղէմայ թաղաւորութիւնն ի վտանգի էր տաճիկ իշխանաց երեսէն, այս ինքն Դամասկոսի Մալիք Դոխմաղի, որ մեռաւ 4404 ին, եւ ապա իւր որդի Թուծուշի կողմից: Զանց առնեմք նկարագրել բոլոր պատերազմքն, յորում բազմիցս Քրիստոնեայք պանծացին յաղթութեամբ ընդ հովանաւորութեամբ կենարար խաչին:

Պրտվէն, որ ստիպուած էր 4408 ին թողուլ Սիդոն կարեւոր ամրոցի պաշարումը, մի յեղակարծ օգնութեան շնորհիւ 4410 ին առաւ քաղաքը. զեռաւորք Եորվեկիոյ թաղաւոր Սիկուր 4407 ին ժողովելով 40,000 Աքանտինավացիք՝ ուղեւորուեց դէպ ի Սուրբ Երկիրն. հասանելով 4408 ին ի կողմանս Փորթուզայի՝ յափշտակեց յԱրարացւոց զԼիզբօն, Կէնտրա եւ Ալկասէր, ու ժամանելով անտի ի Պաղեստին նըպաստեց Պրտվէն արքային յառման Սիդոնի 4410 ին յամենան զեկտեմբերի. թաղաւորն ի վարձատրութիւն Սիկուրի տուաւ նմա մի մասն ի Խաչափայտէ: Այդպէս բոլոր եղբական քաղաքք անկան Պրտվէնի իշխանութեան ներքոյ:

Իշխանութիւն Անտիոքի:

Թէեւ Անտիոքայ իշխանութիւնն անկախ էր յերուսաղէմայ, պատճառ որ՝ Բօէմոն երզուեալ էր հպատակ մնալ Կ. Պօլսոյ Կայսեր եւ ինքնուրոյն կը կառավարէր, սակայն սոյն իշխանութեանս հանգամանքն խիստ մտերմօրէն կապուած լինելով ընդ Երուսաղէմայ՝ հարկը ստիպումէ մեղ մի քանի խօսք ասել: Մինչդեռ Բօէմոն իղիպահոջս կար ի Թանկրէտ, որ յանժամ զրկեալ էր իւր Թիրէրիոյ կոմսութենէն եւ կը կառավարէր զԱնտիոք եւ կը տարածէր այդ իշխանութիւնը յափշտակելով ի Յունաց Ատանա, Մամիստրէ, Լառդիկէ: Ապա վերադարձնելով իշխանութիւնն Բօէմոնին, որ 4404 ին ազատուել էր Գանշմէնի ձեռից, շնորհիւ Վասիլի Հայ Իշխանին — խաղաց ընդ նա յօդեութիւն կոմսին Եղեսիոյ եւ Յօսըլէն իւր ազգակցին, որ մի փոքր պետութիւն էր հիմնել նուաճելով զԹէլքաշը, Մարաշ, Այնթապ, որք էին ի ծայրս Եղեսիոյ: Շէմա — ուլ — Գօլլէ իշխան Մուսուլի եւ Սօլիման իշ-

խան Մարտինոյ կը զային զօրօք ընդդէմ այդ երկու իշխանաց. այն պատերազմի մէջ, որ տեղի ունեցաւ յեղերս Եփրատայ, Քրիստոնեայք փախուստ առին. Եղեսիոյ կոմսն եւ Յօսըլէն զերուեցան ի Տաճկաց եւ տարուեցան ի Մուսուլ:

4404 ին Բօէմոն ընկերակցութեամբ նախկին պատրիարք Դակօպէրի (Պապի Լէգաների մինն հանեալ էին ի պատրիարքութենէ), թողաւ զԱսիա ու չորսու յԵրուսա օդեութիւն որոնել ընդդէմ Խաչակրաց թըշնամեաց, որք էին ոչ թէ միայն Տաճիկք, այլ եւ Յոյնք եւ Արաքք. ի բացակայութեան իւր յանձնեց կառավարութեան զեկն Թանկրէդի, որ կը վարէր նաեւ Եղեսիոյ իշխանութիւնն ի բանտարկութեան Պրտվէն տը Բուրդի: Թանկրէդ իւր զործունէութեամբ, խելացութեամբ եւ իւրեան ընտելական քաջութեամբ կատարեց ըստանձնեալ պաշտօնը, 4405 ին նուաճեց Արտաշէն եւ 4407 ին Ապամէն: Սակայն երբ 4409 ին Պրտվէն տը Բուրդ եւ Յօսըլէն զերծան ի բանտէ, Թանկրէդ՝ պատրեալ ի փառասիրութենէ մերժեց տալ զԵղեսիա նմա. այս մերժումս արտադրեց մի քաղաքական մարտ, որով կողմանք միացան ընդ անհաւատըս, եւ ի հարկէ այդ երկպառակութիւնը կարի վըտանգաւոր պիտի լինէր Երուսաղէմայ՝ եթէ քանի մի ատկետը միջամուխ չը լինէին եւ վախճան չ'տային սոյնպիսի մի վրձի, որ մինչ ի մահ մի խորին ոխ ձգեց Պրտվէնի եւ Թանկրէդի սրտից մէջ: Այս վերջինս մեռաւ ի 6 զեկտեմբերի 4412 յԱնտիոք. զգալով իւր վախճանն կոչեց իւր մահուան անկողնոյ մօտ իւր ամուսին մատաղահաս Ալէսիլին, որ էր զուտոր Ֆիլիք Ա. արքային Գաղղիոյ եւ Տրապօլսոյ առաջին իշխան Բէրթրանի երկուտասանամեայ Պօն որդին, ապա միացնելով նոցա ձեռերը պատուիրեց, որ զուգաւորութիւն ամուսնական կապերով երբ Պօն կը հասանէ իւր ութ եւ տասներորդ տարին: Անտիոքայ կառավարութիւնն որ կը պատկանէր Բօէմոն Բ. ին, Բօէմոնի չորեքամեայ որդւոյն, պատճառ որ՝ վերջինս մեռեալ էր ի 4411, Թանկրէդ յանձնեց վարչութիւնն Ռիշարի որդի Բօմէրին, երզմանցուցանելով զնա, որ ի ժամանակի պահանջման վերադարձնէ այդ աւանդը Բօէմոնին: Բօմէր մի անկար իշխան էր, նա փոխանակ տարածանելոյ իւր սանի պետութիւնն, հազիւ կարողացաւ եւ զայն պահպանել յերեսաց թըշնամեաց:

Պրտվէն արքայն 1118 ին մի յանդուգն ձեռնարկութիւն արաւ, ընկերակցութեամբ երկու հարիւր վեշտառն ասպետաց եւ 400 զինուորաց յառաջացաւ յեկեղեցոս մինչ⁴ Նեղոս առանց հանդիպելոյ որ եւ իցէ ընդդիմադրութեան, պատճառ որ՝ իւր զաւուտը ահ էր սիրել ի սիրուաւ եկեղեցոսի: Բայց մի հին հաստոյր վիրաց քաջման առիւթ վերադառնալով յէրարիշ մեռաւ պատուիրելով, որ թագը տան իւր եղբոր Եւստաքէոսին, ու եթէ սա մերժէ, դալ յերուսաղէմ՝ Պրտվէն ար Բուրգին. իւր մարմինն փոխադրուեց յերուսաղէմ:

Սակայն յումպէտս չիցէ ակնարկ մի ծղել աստ նա եւ Կիլիկիոյ վերայ:

Թորոս իշխանն կառավարէր զԿիլիկիա ու հետզհետէ տարածանէր իւր իշխանութիւնն: Սէլճուգեանք, որք զհետ էին յարածամ արշաւել ի Կիլիկիա՝ յաւթուեցան Թորոսէն, որին օճան էր Գող Վասիլ: Բայց մարդկային կեանքը նմանելով թաւորի, ուր փոփոխակի կը խաղացուին երբեմն բարի երբեմն չար անցք, անկար է լինում միշտ յարակայել մի հիման վերայ, քանզի մինչդեռ Կիլիկիոյ բնակիչք կային յանգործի Թորոսի խոհեմ կառավարութեան ներքոյ, ահա նախանձը՝ որ ընդունակ է երբեմն տապալել եւ ահաւոր պետութիւնքն, մտաւ Հայ որեարց սիրտը, դուրս բարուրանօք զրպարտելով զԹորոս զարժրին Լեւոնի եղբայրական սէրը յատելութիւն, որ տակաւ սաստկանալով մինչ յայն աստիճան հասաւ, որ երկու եղբարք զհետ եղին կորուսանել զմիմեանս:

Եղեսիոյ Պրտվէն տը Բուրգ կոման թէ եւ պատերազմական, բայց քստ վկայութեան Ուսհոյեցւոյ ժամանակակից պատմագիր՝ լինելով մի անիրաւ մարդ եւս առաւել գրդուեց Լեւոնի ատելութիւնը: Բնական էր այդ մի Լատինացւոյ, որ լինելով ծնրադիր Պապի՝ բոլոր նոցա՝ որք չէին հնազանդողք կոյրզկուրայն պապականութեան՝ կը համարէր որպէս թշնամի քրիստոնէութեան, ուստի սնտոի բաղրազանօք զնաց եւ պաշարեց Կապան ամուր բերքն, որ կը պատկանէր Գող Վասիլ յաջորդ Տղայ Վասիլը: Վարդաւնալով զինու. զօրութեամբ նուաճել Վասիլը, խորամանկութիւնն ի կիր արկաւ եւ յաջողեց: Լեւոնի կիներ, որ Պրտվէնի բոյրն էր, ծննալ էր մի դուստր. այս դուստրս չափաւաս էր յայնժամ, ուստի եղեսիոյ Կոմ-

սըն ծածուկ զաշնադիր լինելով Թորոսի հետ խնդրեց իւր փեսայ Լեւոնից տալ իւր դուստրն Վասիլն: Լեւոն հաճելով կոչեց առ ինքն զՎասիլ եւ պատկեց իւր զստեր հետ: Բայց Թորոս նենգութեամբ հրաւիրելով իւր եղբոր փեսայն ի տուն իւր՝ բռնեց զնա եւ զաղտնապէս առաքեց առ Պրտվէն, որ զրկելով զնա յամենայն իշխանութենէ ու աղելով զՔեսուն, Ռապան եւ զայլ ամրոցս՝ արծակեց: Այս պատճառաւ Լեւոնի ատելութիւնը խիստ սաստկացաւ: Այդու չը բաւականանալով Պրտվէն, 1117 ին պաշարեց ըզ-Պիր. այս քաղաքս, որ պատկանէր յայնժամ Ռալխարիպ եւ Լիկոս արի հայ զօրապետաց եւ որք էին հօրեղբորորդիք Շնորհալոյն, թէ եւ անառիկ, սակայն սովի պատճառաւ անձնատուր եղեւ: Այլ եւ սոյնգունակ զործեր շատ զործեց Պրտվէն հայ իշխանաց հետ, բայց ապա յանձնելով իւր Եղեսիոյ կոմսութիւնը իւր ազգական Յօաքիմի իամ չոսլինի, որպէս վիճակ թագաւորութեան զնաց յերուսաղէմ ու պապականութեամբ յ2 Ապրիլի 1118 ամի:

Թորոսին յաջորդեց իւր եղբայր Լեւոն Ա. ի 1125 ին:

Պրտվէն Բ. ի իշխանութեան ժամանակ Երուսաղէմայ թագաւորութիւնն հասնաւ էր իւր պայծառութեան վերի աստիճանին. այդ թագաւորդ կցեց Երուսաղէմայ հետ եւ զԱնտիոք, պատճառ որ՝ ի 1119-ին մեռեալ էր Ռօփեր: Բայց 1125 ին բռնուելով մի զարանի մէջ, որ Հալէպի սուլթանն էր լարեր, Էսթաթալ Գրընիէ, իշխան Սիդօնի եւ Կեսարիոյ եւ սպարապետ թագաւորութեան, անուանեցաւ Խնամակալ ի բացակայութեան արքայի: Էսթաթալ զրաւելով ի կենաց 1125 ին, յաջորդեց ի խնամակալութեան եւ ի սպարապետութեան Գիլյոմ իշխան Տիբերիոյ, որոյ ժամանակ Քրիստոնեացք ձեռն արկին Տիւրոս կարեւոր ամրոցի պաշարման օժանդակութեամբ Գօսլինի-գօ Միքայելի Վենետիկոյ դօժին: Բայց նախ քան զձեռնարկութիւնն մի ժողով եղև յԱքեայ, ուր սահմանուեցան հետեւեալ թէւութիւնքն ընդ Վենետիկացիս: Յամենայն քաղաքս վերաբերեալս արքայի եւ սեպուհեաց Վենետիկացիք պիտի ունենան մի առանձին փողոց, մի եկեղեցի, մի լոգարան եւ մի հացադործի խանութ: Իւրեանց տուեալ Աքեայի մի մասն, որ ընդունած էին Սիդօն ամրոցի պաշարման զործակ-

ցումնան առթիւ: Եթէ Տիրոս եւ Ասկաօն քաղաքն առնէին իւրեանց օգնականութեամբ, պիտի ունենային մի մասն այն քաղաքներից: Բաց ի սոցանէ՝ նոցա վաճառականաց մեծ արտօնութիւնը պարզեցին:

Յաւարտ զաշնադրութեան պաշարեցին զՏիրոս ի 15 փետրվարի 1124 ին: Այս քաղաքս, զոր կը պատկանէր Գահրէի Խէլիֆային, բացաւ յունիսի 9 ին իւր զրունքն Խաչակրաց, Դօմի եւ Տրապիզոն կոմսի առաջեւ: Յետ ժամանակաց Պրովէն Բ. հատուցանելով իւր փրկանաց զինը ազատուեցաւ ի ծնեաց Թէմուր-Մաշի: Պրովէնի եւ իւր յաջորդաց ընդ Մուսուլմանս ունեցած սնվերջանալի կոխներում մեծապէս զօրավիզ եղեն ասպետական կարգաց հաստատութիւնքն, որ այդ Պրովէնը պաշտպանեց: Այս կարգս, որոց մէջ ասպետական հոգին միաւորեալ էր եղականապէս ընդ անապատական կենաց, այդ դարու նորանշան տեսլաց մինն է:

ՀԷՃԱՆՔԻ ՍԵՔՆԻ ՅՈՒՆՆԵՐ ԿՐԺԻ:

Սրբոյն Յովհաննու ասպետական հռչակաւոր կարգը յառաջընթաց է ի հիմնանէ երուսաղէմայ Թագաւորութեան: 1048 ամի Ամալֆ քաղաքի վաճառականը գտնուելով Սուրբ Երկրում որպէս ուխտաւորք, հիմնեցին առնմեք Գերեզմանատան Եկեղեցւոյ մի մատուռ, մի վանք եւ մի հիւանդանոց յաղագս ասպնջականութեան իւրեանց ազգի ուխտաւորաց, որք հասարակօրէն վատ կերպիւ կընդունուէին ի տեղական Քրիստոնէից: Անդ բնակեալ Ղաթին ճգնաւորք ընտրեցին զՍուրբն Յովհաննէս պաշտպան իւրեանց, որոյ աղագաւ յորջորջուեցան Ասպնջական եղբարք Սրբոյն Յովհաննու: Ժէրար Պրովէնսալ ուն, որ ի ժամանակս առաջին խաչակրութեան զլուխ էր այդ հիւանդանոցի, բաժանուեցաւ սննաստանից եւ հիմնեց մի այլ կրօնական միաբանութիւն տալով մի առանձին կանոն եւ որոշելով այդ կարգի զգեստը մի սեաւ հագուստիւ եւ սպիտակագոյն ունակիտեան խայս: Բասթալ Բ. պապն *) կարգը եւ հիւանդանոցը իւր հովանաւորութեան ներքոյ առաւ՝ արդէն նուիրեալ սարգեւր վաւերացնելով եւ նմա ստորակարգելով Խտալիոյ զանազան քաղաքաց մէջ եղած հիւանդա-

նոցրը: Ուսման տը Պօնի երկրորդ գլուխ կամ վերակացու հիւանդանոցի ժողովեց կարգի այլեայլ սահմանադրութիւնքն ու կազմեց նորօր մի ժողովածոյք օրինաց, որ Կալեփս Բ. *) հաստատեց ի 1120 ամի: Կարգը բաժանեալ էր յերկու եղբայրական դասս, — կղերք, որոց յանձնեալ էր ուխտաւորաց հոգեւոր օգնութեանց մատակարարութիւնն, եւ աշխարհականք՝ ի հոգացողութիւն ախտաժէտաց: Յետ ժամանակաց երբ Տաճարական ասպետութեան ընդ անապատական կենաց միաւորման առաջին օրինակն տուին, հաստատեցաւ երեք դասք — քահանայք, ծառայողք եւ զինաւորեալ ատպետք. վերջինքս պաշտօն ունէին առաջնորդել ուխտաւորաց՝ յերեսաց ասպատակութեանց անհաւատից: Ունեւտաներորդ — յաջորդին Ժէրարի Հուգ Բովէն ընտրեալ յոմի 1159, եղև առաջին Կարգապետ մակկիր ընդունօղն յննօսանք **) Դպապէ: Թագաւորք եւ իշխանք Երուսաղէմայ քաղաքան մեծապիս պարգեւք նուիրեցին կարգին:

(*) Կալեփս Բ. էր տրքեպիսկոպոս Վեննա քաղաքի, որ Ժէլապ Բ. պապի ժամանակն զկիւ ընտրեցաւ պապ 1119 ին. իւր քահանայապետութեան չորրորդ տարին զօմարեց մի ժողով ի Ղաթան, որ համարվում է որպէս ինքեբորդ տիկեբեականն, բայց առաջինն յԱրեւմտոս: Մեռաւ 1124 ին. իրեն յաջորդեց Հոնօրիոս Բ. Ե. Թ:

(**) 1124 ին Գրիգոր Թ. մեռանելով, Կոնկուի ութ կարգիւնայք ընտրեցին պապ զԿղեմէս Գ. բայց սա մեռանելով 118 օրէն զկիւ առանց օծուելոյ, ապա կարգիւնայք վարդապետ համակալել պապի ընտրութեան վերայ մինչ որ Ֆրէտէրիկ Բ. կայսրն եկաւ պաշարեց զՀոմ ու աւերելով կարգիւնայք կալուածքն, որով ստիպուեցան ընտրել կայսրն բարեկամ ճննուացի Սիմեալը, որ իննօսան Գ. կոչուեցաւ: Սա գումարեց ի Կոն 15 իր . . . Ժողովն, եւ ըստ որում յայնժամ պապից եւ կայսրն մէջ մեծ գոտութիւնք եւ կոխիւնք կային, խննօսան կենքի ի ժողովի Ֆրէտէրիկոսին . հերձուածոյ, ուխտաւորութ, հալածիչ՝ մակնաւորմանք եւ ի վերջոյ բանալիցն զնա. աստ արժան համարեմք յառաջ բերել այն կոնգալի վերջին տողերն, որ քահանայանաց շտեմերն կարծաւէր: Մենք գրկում ենք ի բոլոր պաշտմանց եւ պատուոյ այդ իշխանը, որին երես է դարձրել Աստուած իւր անխառնութեանց համար եւ արժանկում ենք յերբանէն այն անմիւրք, որ խոտացեալ են նմա հաւատարմութիւն. արգելում ենք զօրութեամբ մերոյ առաքելական իշխանութեան՝ որ ոչ որ հնազանդի նմա յարմ հետէ եւ այլն: Ինչ ասել կուզէ, որ պապն արգարութեամբ չգտնեց Ֆրէտէրիկոսի պէս մի առաքինի կայսրը, այլ միայն իւր իղծն էր յազօրող տալ իւր փառաւորութեանց, քանզի երբ Ֆրէ. մեռաւ, իննօսան պապն ցնձութեամբք եւ ուրախութեամբք հրատարակեց նորա մահը եւ մի այնպիսի կերպիւ, որ չէր արժանի մի սոսկ քրիստոնէի. Թող զինքն փոխանորդ Քրիստոսի քարոզող անձի: Բայց ինքն էլ հոգի չորս ամ ապրեցաւ կայսրն մահուանից յետոյ, մեռաւ 1154 ին:

(*) Պատրալ Բ. պապը ընտրուեցաւ 1099 ին, որոյ քահանայապետութեան երկրորդ տարին մեռաւ հակապապ Կղեմէս Գ. իւր մահը պատահեց 1118 ին: Ե. Թ:

(2) Եւգինէոս Գ. էր աշակերտ սրբոյն Բէրնարդոսի, ընտրուեցաւ պապ 1145 ին. սա բոլորովին մեկեացեց Հոմիայ հասարակա-

ՀԻՄՆՈՒՆԻ ԼՈՐԷՆՏ ՏԱՏԱՐԱԿԱՆԱԳ:

Իմն ասպետը, զոր ղիպուածն առաջնորդեալ էր, ի Պաղեստին հիմնեցին ի 4128 ամի մի եղբայրական բնկերութիւն, որ եղև սկզբնապատճառ Տաճարական կարգի: Առաջին տաճարապետն եղև Հուգ Պէթէն ի տանէն Շամբայնի: Ասպետը երգուեցին հետեւեալ երբեակ սովորական ուխտադրութիւնքն, — ողջախոնութիւն, հնազանդութիւն եւ աղբատութիւն. ուսկ յետոյ յաւելացրին եւ չորրորդն, որով կը նուիրէին զինքեանս ի պաշտպանութիւն եւ յապահովութիւն ուխտաւորաց: Պըտվէն Բ. պարզեց նոցա իւր սպաւտան մի թիւը. մի աւանդութիւն կը հաւատէր իբր թէ այդ թիւը էր Սողոմոնի հին տաճարի սիւնան. — աստի յորջորջուեցան՝ մարտիկ եղբարք տաճարի, ասպետը տաճարի — Տաճարականք: Թրուայի եկեղեցական ժողովն յամի 4128 վաւերացնելով կարգը՝ տուաւ նմա մի կարգադրութիւն յօ բինեալ ի սրբոյն Բերնարդոսէ հրամայելով, որ Տաճարականք կրեն ճերմակ զգեստ: Խոն ինչ ժամանակէն զկնի՝ Եւդինէոս Գ. Թոյլատրեց 4146 ին կապել նաեւ մի կարմրեանդ խաչ: Յետ քաղում ժամանակաց Տաճարականք ղիգեցին մեծ հարստութիւնք, ղիսաւորապէս ի Գաղղիայ. ի 4150 ամի կայսրն Լօթէրիոս շքնորհեց նոցա Սուպլէն ռուրդի կոմսութեան մի մասն. յամի 4180 ասպետաց թիւը 5000 էր, թող զբաղմանիւ ծառայողս: Զկնի կորստեան Պաղեստինոյ յովր ի նոցանէ ցրուեցան ի Գաղղիա, ուր ցայն աստիճան նախանձ ազդեցին Թագաւորաց, որ ի վերջոյ բռնութիւնք ի կիր արկին եւ նորօք բնաջինջ արին զնոսա:

Պըտվէն Բ. ութ ամ Անտիոքայ իշխանութիւնն կառավարելէն զկնի՝ կամօք յանձնեց զայն ղեռաւորք Բօէմոնդ Բ. ին, որ հասանելով յարբունս երիտասար-

պետութիւնն, որ ղեռ կը տնէր յառնայն իշխանութենէ. վեր առաւ պատրիկութիւնը եւ նորա անդ հաստատեց մի կուսակալ: Մեռաւ 4135 ին:

(5) Հենրիկոս Ե. անժառանգ մեռանելով, Գերմանիոյ հոգեւորականք եւ աւաղանիք ժողովուելով ի մի վայր 4125 ին, ընտրեցին կայսր Գլօթէրիոս զուրա Սարսոնիոյ, որ մի պատուաճանաց նաւագոտ եւ արի իշխան էր: Լօթէրիոս առաջնորդելով բննասն Բ. ին ի Հոռոմ եւ վճռուելով անտի հակապայքը, ի վերադարձին հիւանդացաւ մի ղիլղում եւ մեռաւ 4138 ին:

Մահօրոք իւր Թ.

զուծեան եկաւ պահանջել իւր ժառանգութիւնն ի 4264 ին եւ ամուսնացաւ ընդ Ալէքսի երկրորդ զստեր արքայի:

Եւ քանզի Բօէմոնդ այդ մեծ ղերը խաղաց ի Կիլիկիա եւ զոր գրոյս յարգոյ հեղինակը զանց է առնում յիշել ղոյնպիսի մի երեւելի անցքը, ուրեմն մեզ Թարգմանչիս անկ է տալ մի քանի հակիրճ տեղեկութիւնք: Լեւոն Ա. յաջորդելով իւր եղբօր Թորոսին, որպէս յիշեցինք, սկսաւ առնուլ ի Յունաց քաղում քաղաքս, ի թիւս որոց Մսիս քաղաքն. իւր քաջութեանց եւ իմաստուն կառավարութեան առթիւ մեծ համբաւ ստացաւ եւ կոչեցաւ Սիբաստոս *): Բօէմոնդ նախանձելով այդ փառաց վերայ կամեցաւ նուանել զնա խորամանկութեամբ. խօսք կապելով Մարաշու Լատին իշխանի հետ 4150 ին լարեց մի որոգայթ Լեւոնի համար, որ բռնուեցաւ եւ եղաւ ի ղիպահօղոյ: Ապա անճարացեալ տուաւ Բօէմոնդին իւր ազատութեան համար Ատանա, Մամեստրոս կամ Մսիս, Սարաւնդիկեար քաղաքն ու 60000 զանկան: Բայց հաղիւ թէ զերծաւ ի բանտարկութենէ, անմիջապէս ետ առաւ իւր բոլոր տուած քաղաքքը եւ այնքան նեղը ձգեց Լատինացիքը եւ տակնուվերայ արաւ զԱնտիոք, մինչեւ որ նորա տալով իւրեանց կողմից պատանդս եւ միջնորդ ձգելով եղեսիոյ չօսելին կոմսն, ընդ որում էին նորա զօղք բարեկամութեան, հաշտուեցան ընդ իրեարս: Լեւոնի ընդ Լատինացիս ունեցած պատերազմքն ոչ սակաւ ամանեցին Կիլիկիոյ, բայց վերջապէս հաշտութեան զաջն կապելով աննորորացաւ:

Բօէմոնդ Բ. որ իւր առաջին զործովքն մեծ յոյսեր էր խոստանում քրիստոնէից, սպանուեցաւ 4154 ին ի Տաճկաց: Իւր այրի ամուսինն զրաւեց Անտիոքայ կառավարութիւնն ոչ թէ իբր խնամակալուհի իւր Կոստանիսա զստեր, բայց եթէ այդ իշխանութիւնը մի երկրի ամուսնոյ օժիտ տանելու ղիտաւորութեամբ: Կեր Պըտվէն Բ. ստիպուեցաւ խաղալ ընդդէմ իւր զստեր եւ հասանելով յԱնտիոք երդմնեցոյց սեպուհները եւ ժողովուրդը ցուցանել հաւատարմութիւն Բօէմոնդի զստեր Կոստանիսա իշխանուհոյն:

(*) Սիբաստոս Զունական բարբառ է՝ եւ նշանակէ փառաւոր իշխան:

Պրավեն Բ. դրանցաւ ի կենաց 1151 ին թողով
պահը Ֆուրք Տանժուի վաճառմանայ ծեր Գաղղիոյ
Սէնէշաղին, որ երկր ամօք յառաջ ամուսնացեալ էր ընդ
Մէլիսանդի անդրանիկ դստեր արքայի եւ որոյ ազա-
դաւ ժառանգեալ էր Աքեայ եւ Տիւրոս արքայական
քաղաքի մի մասն: Այդ ժամանակ Եղեւսիոյ, Անտիո-
քայ եւ Տրապոլսոյ իշխանութիւնքն ստորակարգեալք
էին Երուսաղէմայ. եղբերական քաղաքաց մէջ միայն
Ասիալոն ունէր Եղիպտական պահակք, բայց ի միջոյ՝
միայն Եսմեա, Հալէպ, Համա եւ Գամատիոս Սէլ-
մուդեանց կը պատկանէին: Չնայեցեալ բրիտանեա-
կան իշխանութեան այդ բարգաւաճ վիճակի վերայ,
Ասիոյ Լատին Քրիստոնէայք վտանգալից պարագա-
լից մէջ էին դտանուում, որը իւրեանց ներքին երկ-
պառակութեան, եւ որը արտաքին թշնամեաց պատ-
մառաւ: Երուսաղէմայ ամենատահաւոր թշնամին ի
ժամանակս Ֆուրքի՝ էր Էմատուսդին Չէնկի, կոչե-
ցեալ Արիւնտո յարեւմտեան պատմագրաց. դա էր
Աթապէկի այս ինքն փոխանորդ կամ պաշտօնեայ ի
Մուսուլ, զոր անկախութիւն ձեռ. ձգելով Բաղդատի
Սէլմուդ սուլթանէն ստացեալ էր Սիրիայի եւ Միջա-
դեստաց շնորհն. արդարադատ, քաջ եւ զործունայ
իշխանն Չէնկի հիմնեց մի նօթօր պետութիւն:

($\tilde{G} = F \oplus \mathbb{Z} \oplus \mathbb{Z}$)

[illegible]

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ.

$$(\tau_{\text{max}} = \frac{\gamma}{2} = \frac{1}{2})$$
[illegible]

Stammes- und Familien-Namen: —

Պաղարբեր դոյացութիւնք գործին զանա-
զան կերպիւ, 1, մեքենական խառնուրդն
կազմելով հոգոյ հետ, որով մեքենայա-
կանն հազորդ լինի երկրի բնական զօրու-
թեանց. 2, բնալուծութեամբ գործէ՝
փասակար և ի սկզբան արմատ ց ծծկուն

անյարմար նիւթս տնկական սննդեանն ի տարր շրջելով, և բաղադրութեան լուծման և միութեան զտեղի տալով. 3, արմատոց ծծողութեան զօրութիւն յաւելլով, և կենսական աղբեցութիւնն զրգուելով. 4, իբրեւ ինքնին յինքեան բովանդակիչ, և սննդեան սկզբունքն տնկոց ուղղակի տալով, որ է առաւելապէս գործարանական սկզբնական նիւթոց աւելորդքն:

Ի վերջոյ որոշուի ներկայացուցեալ ազգեցեալ թիւնքն ընդհանրապէս՝ ի նոյնպէս պաղաքերէն, զի շատ անգամ նոյն գոյութիւնն գործադրի մի կամ երկու անգամ, կամ նոյն յատկութիւնքն միանգամայն, բայց նոցա մէջն կայ մինն՝ որ ամենագլխաւորն է, բայց յայդմանէ պաղաքեր գոյութիւնքն երեք կարգ բաժանին, պարարտութիւն երկրի, գրգռիչ դաս, և աղբ, մի այլ դասաւորութեան գրութեան մէջ բաժանին նոյն գոյութիւնքն. 1, հանքային, որ պատշաճի պարարտութեան և գրգռիչ դասին, 2, գործարանական, որք են աղբք, որոյ վերայ պէտք է յաւելլու բնալուծական գործողութեան խառնուրդս, երկիրն և հողն մասնաւորապէս են հաստատուն սկզբունքք, որք անկող տան սկզբնաւորութիւն, մինչդեռ միւսներն յառաջ գան մանաւանդ ցնդական ըսկըզբունքէն, յորմէ անշուշտ յառաջ դայ մի զանազանութիւն, զոր ծծեն իւրեանց վերջին ազգեցութեանց մէջ, իրօք տունկք ստանան առաւել հաստատութիւն իւրեանց սկզբնանիւթով մինչև զարգանալ շատ թփովք, և թափել զայնս այլոց անկող տակ: Այսան որոյ ընդհանրապէս գերմանական երկրագործութեանն տեղեակ լիզու գործածելն պէտք